

Կարծիք

Լևոն Գազիկի Ալոյանի՝

«Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման
հեռանկարները դատաիրավական բարեփոխումների համատեքստում.

տեսական-իրավական վերլուծություն»

թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող աշխատանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության զարգացման հեռանկարների հարցերին: Ատենախոսական աշխատանքի արդիականությունը, իմ կարծիքով, փոխկապակցված է դատական իշխանության համակարգում առկա լուրջ հիմնախնդիրները, ինչպես նաև իրավակարգավորումների թերությունները վերհանելու և հաղթահարելու ջանքերի կարևորության հետ:

Հեղինակը, մասնավորապես, նշում է, որ «դատական համակարգը կայացած ժողովրդավարություն ունենալու ճանապարհին նույնքան կարևոր ինստիտուտ է, որքան օրենսդիր մարմինը կամ արդար ու ազատ ընտրությունները» (Ատենախոսություն, էջ 3):

Հարկ է նշել, որ գրախոսվող աշխատանքը շարադրված է նորմատիվ նյութի, դատական պրակտիկայի և մասնագիտական գրականության պատշաճ վերլուծության հիման վրա, ինչը հեղինակին հնարավորություն է ընձեռել հետազոտվող թեման բացահայտել ամբողջ ծավալով:

Հետազոտության հիմնական նպատակն է դատական իշխանության վերաբերյալ տեսականորեն հիմնավորված հայեցակարգերի մշակումը: Հիշյալ նպատակին հասնելու համար հեղինակն առաջարկել է.

-բացահայտել դատական իշխանության դերն ու նշանակությունը ժողովրդավարական արժեքների կայացման և սոցիալական վեճերի արդարացի լուծման տեսանկյունից,

-վերհանել դատարանի՝ որպես պետական մարմնի, անկախության բաղադրիչները,

-բացահայտել դատական իշխանության համակարգում առկա հիմնախնդիրները և ուրվագծել անկախ դատական իշխանության զարգացման հեռանկարները:

Աշխատանքի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ հեղինակը լուծել է իր առջև դրված խնդիրները, ինչպես նաև հանգել է տեսական և գործնական նշանակություն ունեցող հետևությունների:

Գրախոսվող աշխատանքի գիտական նորույթը, իմ կարծիքով, նրանում է, որ հեղինակը դատական իշխանությունը դիտարկում է որպես կենդանի սոցիալական ինստիտուտ, որն իր տարբեր մարմինների միջոցով ոչ միայն լուծում է իրավական վեճեր, այլև կոչված է ապահովելու հանրային խաղաղության հաստատումը:

Ընդհանուր առումով դրական գնահատելով աշխատանքը՝ ունեմ նաև որոշակի նկատառումներ, որոնք վերաբերում են թե՛ համեմատական վերլուծությունների սակավությանը, թե՛ դատական իշխանության խորքային հիմնախնդիրների հաղթահարման համար հայեցակարգային լուծումների տեսական հիմնավորվածությանը:

Այսպես, օրինակ՝ աշխատանքը ավելի կշահեր, եթե հեղինակը քննարկման առարկա դարձներ Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության առանցքային հիմնահարցերը նաև այլ երկրների արդիական և համադրելի փորձի տեսանկյունից:

Կարևոր նշանակություն կունենար նաև դատական իշխանության մարմինների, հատկապես՝ դատական համակարգի մարմինների կառուցակարգային և գործառությային տարանջատմանը վերաբերող տեսական հիմնահարցերի ուսումնասիրությունը՝ դրանց գործնական լուծումների ներկայացման տեսանկյունից:

Այդուհանդերձ՝ շեշտելով դատական իշխանությունում առկա էական հիմնահարցերի վերլուծության մասով հեղինակի փութաջանությունը՝ կարծում եմ, որ վերոգրյալ նկատառումները չեն կարող խոչընդոտ դառնալ աշխատանքի ընդհանուր դրական գնահատման համար:

Ընտրված մասնագիտությունը համապատասխանում է ատենախոսության մասնագիտական թվանիշին, իսկ սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթները:

Շեղինակի կողմից հրատարակված նյութերում արտացոլված են թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Լևոն Գազիկի Ալոյանի՝ «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման հեռանկարները

դատաիրավական բարեփոխումների համատեքստում. տեսական-իրավական վերլուծություն» ԺԲ.00.01 մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը ավարտուն հետազոտություն է, բավարարում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝

իրավաբանական գիտությունների

դոկտոր



Հ.Վ.Թովմասյան